Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի <<Զատիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի դաստիարակի(1 դրույք) թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ՀՀ ԿԳՄՄՆ №-471-Ա/2, <<25>> մարտի 2022թ. հաստատած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին։

Որակավորման պահանջները՝

1) նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում.

- կրթության մասին փաստաթուղթ /դիպլոմ/.

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/.

- ինքնակենսագրություն /Ձև 4/.

- մեկ լուսանկար 3x4 չափի.

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ /դրանց առկայության դեպքում/

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում։

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը։

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 27-ից մինչև փետրվարի 24-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։ Մրցույթը կկայանա փաստաթղթերի ընդունման ավարտից հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում։

Հասցե՝ Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Ջախափնյակ 2/3, <<Զատիկ>> մանկապարտեզ։

Տեղեկությունների համար զանգահարել՝ +37498175071, +37477166511, +37491555584 հեռախոսահամարներով։